Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում «Արձագանքի» ներկայ համարում տպագրուած «Ռուսկ. Վեդ.» Սև ծովի ափերում բնակուող հայերի վերաբերմամբ գրուած թղթակցութեան վրայ։ Այդ յօդուածը ոչ միայն մի գեղեցիկ բացառութիւն է կազմում մայրաքաղաքի և նոր «Կավկազի» մէջ տպագրուած ստոյգ և անբարեխիղճ գրուածներից, այլ և նա իբրև մի գեղեցիկ ուսումնասիրութիւն, իւր պարզութեամբ, անպաճոյճ հիւսուածքով, միայն մաքուր անկողմնապահ գիտութեան յատուկ պարզ և ճիշտ ուսումնասիրութեամբ կարող է իբրև օրինակ ծառայել այն բազմաթիւ գաւառական թղթակիցներին, որոնք փոխանակ իրանց շրջապատող կեանքը տեսնելու, ուսումնասիրելու և գրելու, անմիտ վերացական ճառամաքանութիւններով են զբաղվում։ Թող օրինակ առնեն հայ լրագրների թղթակիցները այդ ուսումնասիրութիւնից, որ առանց փքուն խօսքերի մի քանի սիւնակում ներկայացնում է մի ամբողջ ժողովրդի ոչ միայն տնտեսական առօրեայ կեանքը, այլ և նրա բարոյական և հոգեկան աշխարհը։

* * *

Կովկասեան կրթական շրջանի պ. հոգաբարձուն միջնորդում է ժողովրդական կրթութեան նախարարութեան, որ ժողովրդական կրթութեան կարիքներին յատկացնուին հետևեալ գումարներ. — Երևանեան նահանգի համար 48000 ռուբլի միանուագ՝ նահանգում տարրական դպրոցների շէնքեր կառուցանելու համար, 600 ռուբլի տարեկան տեղական ուսուցչական սեմինարիային՝ գիւղատնտեսական զբաղմունքների համար։ Թիֆլիզի նահանգի համար 4500 ռր., տարեկան, 5 նոր դպրոցներ պահելու համար, 625 ռուբլի տարեկան Գօրիի սեմինարիային գիւղատնտեսական զբաղմունքների համար, 1000 ռր. Դվէտօզոյսկի և Վօրօնցովսկի դպրոցներին։ Բագուի նահանգի համար 4200 ռուբլի տարեկան՝ 6 միդասեան դպրոցներ պահելու, և 6600 ռ. նրանց շինութեան համար, Քութայիսի նահանգի համար 5900 ռր. Գանձակու նահանգի դպրոցներին—20,280 ռր. և Սեւծովի շրջանի դպրոցներին—2800 ռուբլի։

* * *

Ինչպէս յայտնի է Կովկասեան թաթարները զինուորագրութիւնից ազատ են և դրա փոխարէն վճարում են պետական գանձարանին տարեկան որոշ քանակութեամբ զինուորական հարկ։ Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուն ի նկատի ունենալով տեղական թաթարների դպրոցներից զուրկ լինելը և գանձարանի միջոցների պակասութիւնը նոր դպրոցները բանալու համար, միջնորդում է կառավարութեան, որ այդ զինուորական տուրքը համարուի դպրոցական տուրք և այդ հաշուով Կովկասում բացուին երկու թուրք-ռուսական դպրոցներ։ Բայց որովհետև դպրոցական տուրքի սահմանելը կարող է տեղի ունենալ միայն օրէնսդրական կարգով, ուստի մինչև այդ հարկի սահմանելը պ. հոգաբարձուն միջնորդում է, որ այդ գումարների մնացորդները այժմ գործ դրուին յօգուտ ժողովրդական կրթութեան և տրուին իբրև նպաստ գիւղական հասարակութիւններին։

* * *

Կովկասեան կրթական շրջանի պ. հոգաբարձուի կարգադրութեամբ Թիֆլիզի բոլոր միջնակարգ դպրոցներում հարցաքննութիւնները կսկսուին սոյն մայիսի 10 ին.

* * *

Թիֆլիզի առաջին արական գիմնազիայի վարչութիւնը յայտարարում է, թէ ստորին դասարան մտնողների համար հարցաքննութիւնները կլինեն մայիսի 26-ին, 27-ին, 29-ին, 30-ին և 31-ին, իսկ II, III և IV դասարան մտնողների քննութիւնները կկատարուեն մայիսի 7-ին և 8-ին։

* * *

Պետական կալուածների վարչութեան կողմից նշանակուած մի խումբ երկրաչափները ներկայ մայիսի 2-ին ուղևորուեցին չափելու Սեւ ծովի շրջանի հողերը։

* * *

Դաղստանի նահանգի Թարքի գիւղում ենթադրութիւն կայ բանալ թելի, մանուածքի, հիւսուածքի և ներկարարութեան գործարան, այդ նպատակով արդէն կազմուել է մի ընկերութիւն «Թարքայի մանուֆակտուրայի ընկերութիւն» անուամբ։ Ցիշեալ ընկերութեան կանոնադրութիւնը ընկերութեան նախագահ պ. Բեշտոնիկովի միջոցով ներկայացուած էր ելևմտից նախարարութեան, որ իւր կողմից ուղարկել է այժմ Կովկասեան գլխաւոր վարչութեան քննութեան։

* * *

Մի նոր խորտակում է տեղի ունեցել Բալթեան երկաթուղու Դորպատեան գծի վրայ, Բոկենհոֆ և Էլվա կայարանների միջև։ Հեռագիրը հաղորդում է որ այդ գնացքով գնում էին կրասնոեարսկի զօրագնդի երկու բատալիոններ։ Խորտակման ժամանակ ըսպանուած են և ստացած վէրքերից մեռած 56 զինուորներ, իսկ 43 վիրաւորուած են, թեթև վէրքեր են ստացել 2 օֆիցերներ և 37 զինուորներ, բացի դրանցից սպանուել են 2 կոնդուկտոր և մէկը վիրաւորուած է։ Սոսկալի դժբախտութեան պատճառը յանկարծակի հեղեղն է, որ քանդել է երկաթուղու գիծը։ Դժբախտութիւնից 25 րոպէ առաջ այդ նոյն տեղով յաջողութեամբ անցել է փոստատար գնացքը. բայց որովհետև վրայ հասաւ մութը և գիծը կորանում էր ու շարունակ տեղում էր անձրևը, ուստի հնար չեղաւ դժբախտութեան առաջն առնել։ Քննութիւն է կատարվում։

* * *

Գարնանային հեղեղները կրկին սկսել են իրանց աւերածները Կովկասեան երկաթուղու գծի վրայ։ Ինչպէս երևում է, անցեալի դասը դեռ չէ ներշնչել երկաթուղու վարչութեան, արմատական միջոցներ ձեռք առնել աւերածների առաջն առնելու։ Կիւրակէ, մայիսի 4 ին Մարիլիսի կայարանում հեղեղը վնասել է երկաթուղու գիծը և տեղ տեղ ըէլսերը ծածկել այնքան հաստ տղմով, որ խանգարել է գնացքների կանոնաւոր երթևեկութիւնը։ Այս դեռ սկիզբն է երկանց։

* * *

«Օդեսսկ. Նով.» մի շատ տարօրինակ երևոյթ է պատմում Դնեպրօվսկի ռուս աղանդաւորների կեանքից, որ յիշեցնում է Աֆրիկէի վայրենիների պատմութիւնները։ Դնեպրի լիմանի մօտ 9 հոգի կենդանի թաղուել են «հոգևոր փրկութեան» համար։ Երկու տարի սրանից առաջ այդտեղ լուր էր տարածուել թէ 1897 թուին պիտի ընդհանուր աշխարհագիր լինի և թէ մի մեծ գիտաւոր առող պիտի աշխարհին վերջ դնէ և ապա պիտի գայ վերջին ահաւոր դատաստանը։ Անցեալ տարուան կէսին արդէն յայտնի եղաւ որ այս տարի ընդհանուր աշխարհագիրն անպատճառ պիտի կատարուի, ուստի յիշեալ աղանդաւորները վճռեցին օր առաջ մտածել իրանց «հոգու փրկութեան» համար։ Յունվարի 21-ին, երբ Կովալեօվների և Փօմինների տանը մտնեցաւ աշխարհագրողը, տեսաւ որ նրանց դռները փակ են և միայն դրան ճեղքով մի տոմսակ ստացաւ, թէ աղանդաւորները ոչ մի տեղեկութիւն չեն ուզում տալ։ Նրանցից հինգ հոգու տարին քաղաք, բայց որովհետև ոչինչ չէին ուտում և քաղցից կարող էին մեռնել, ուստի կրկին արձակեցին։ Իսկ երբ հարցրին թէ ուր են մնացեալ աղանդաւորները, Կովալեօվ խոստովանեց թէ ինքը նրանց կենդանի թաղել է, որովհետև նրանք ցանկանում էին «նահատակուել»։ Եկան գիտնափոր նկուղների մօտ, ուր թաղուած էին «նահատակները» և իշխանութեան, քաղաքացիների և բոլոր բնակիչների ներկայութեամբ սկսեցին դուրս հանել դիակները։ Տեսարանը սոսկալի էր։ Ամենքը մեռել էին՝ ենթարկուելով սոսկալի ջղային ցնցումների, ձեռները և ոտները կծկուած էին, իրանները կռացած, գլխաները պատառոտած, կաշիները մաշկուած, երեսները ½ վերշակ հաստութեամբ մամուռով ծածկուած, այնպէս որ կանանց չէր կարելի զանազանել մարդկանցից։ Ծծկեր երեխայի մարմնոյ վերին մաս փտել էր... Երբ Կովալեօվին հարցրին թէ՝ ապա ինչու ինքն իրան ևս չէր թաղել, նա պատասխանեց «հոգու փրկութեան» համար և «ի սէր Քրիստոսի» ինքը ևս շատ է ցանկանում կենդանի թաղուել, բայց մէկը չկար որ իրան ևս թաղէր»...

* * *

Կիւրակի, մայիսի 4-ին, կայացաւ հրդեհի դէմ փոխադարձ ապահովութեան ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Անցեալ 1896 ին ընկերութիւնը ընդհանուր եկամուտ ունեցել է 23,639 ռ. 48 կ., իսկ ծախս 8,888 ռ. 19 կ.։ Առ 1-ն յունվարի 1897 թուի պահեստի գումարը կազմում է 56,643 ռ. 72 կ.։

Այս ժողովի վարչութեան նախագահի պաշտօնին միաձայն վերընտրուեց պ. Պետրոս Ալիխէգեանը, վերահսկիչ մասնաժողովի անդամ ընտրուեցան իշխան Նիկօղայոս Արղութեան-Երկայնաբազուկը և Գէորգի Կօլուբանսկին։ Ի տեղի ընկերութեան ճարտարապետ պ. Բօլդարսկու, որ մեկնել է Թիֆլիզից, ընտրուեցաւ ինժեներ Փիթոյեան—Եագուբեանը, վերաստուգիչ մասնաժողովի անդամներ ընտրուեցան պ. պ. Գաբրիէլ Թամամշեանը և Գրիգոր Ջահրուդադեանը։

* * *

Ֆրանսիական դրամատէրերի մի ընկերութեան յանձնարարութեամբ ծրագիր է կազմուած կօնեակ շինելու գործարաններ հաստատել Կովկասեան գինեգործական գլխաւոր կենտրոններում։

* * *

Երկրիս կառավարչապետը իւր տրամադրութեան ներքոյ եղած գումարից մի հազար ռուբլի յատկացրել է Թիֆլիզի բուսաբանական այգու բարեփոխման գործին։

* * *

### Պ. Բ. ԱՄԻՐՋԱՆԸ ԴԵՒԻ ԴԵՐՈՒՄ

Ապրիլի 24-ին Մոսկվայի կայսերական մեծ թատրոնում տալիս էին Ռուբինշտայնի «Демонъ» օպերան, ուր դևի (демонъ) ծանր և պատասխանատու դերը յանձնուած էր մեր հայրենակից պ. Բ. Ամիրջանեան։ Վերջինս արդէն մի տարի է, որ ծառայում է կայսերական մեծ թատրոնում և այդ ժամանակամիջոցին միայն հինգ, վեց անգամ բեմ դուրս եկաւ «Այիդա», «Փաուստ», «Песнь торжествующей любви» օպերաներում, ուր ցոյց տուաւ իւր հանճարը իբրև փորձուած երգիչ և հիանալի բարիտոն։ Ներկայումս իւր զօրեղ և հրապուրիչ ձայնի շնորհիւ պ. Ամիրջանը նմանը չունի իւր ծառայակից դերասանների մէջ և թատրոնի վարչութիւնը, լաւ ճանաչելով այդ ամենը, չէր սխալուած իւր ընտրութեան մէջ և Ամիրջանին էր յանձնել դևմօնի դժուար դերը։ Այդ օր թատրոնը լիքն էր և հայ հասարակութիւն էլ իւր կողմից շտապել էր ներկայ լինելու օպերային։ Աւելորդ է ասել, որ հանդիսականները լարուած ուշադրութեամբ դիտում էին հայ դերասանի ամենայն մի շարժումը, ձեռը, խօսքը և երգը և իրանց մտքում հազար տեսակ դատողութիւններ էին անում։ Բայց ահա վարագոյրը բարձրանում է և բեմի խորութեան մէջ՝ մի ժայռի վրայ նստած է դժոխային դեւ, մտատանջ գլուխը խոնարհած ձախ ձեռքի վրայ, դրիմը և հագուստը շատ վայելուչ են։ 120 մարդուց բաղկացած երաժշտական խումբը նուագում էր և այդ միջոցին մենք լսում ենք դևմօնի ձայնը՝ проклятый міръ (անիծեալ աշխարհ)։ Դերասանի ձայնից երևում է, որ նա շփոթուած է և ինչպէս չշփոթուի, երբ նա երգում էր կայսերական բեմի վրայ, ուր հանդէս են գալիս երաժշտական աշխարհի պայծառագոյն աստղերը. բայց պ. Ամիրջանը յաղթահարում է իւր շփոթութիւնը և երգելով բարձր ձայնով այս խօսքերը՝ «и будешь ты царицей міра ծածկում է օրկեստրի ձայնը։ Ծափահարութիւնները, կարծես, անտեղի էին, վասնզի արարողութիւնը քանի որ շարունակում է, ընդունուած չէ այստեղ ծափահարել, բայց հանդիսականներին դժուար էր զսպել։ Յաջողութեամբ անցաւ առաջին արարողութիւնը, երկրորդում «не плачь, дитя» երգելիս, դերասան մոռացմամբ թողեց небесный блескъ բառերը, սակայն երգը մինչև վերջը հաջողեց գեղեցիկ կերպով։ Զարմանալի բան էր, որ կրկին երգել չտուին հանդիսականները այս կտորը, որ ամբողջ օպերայի եղանակների լաւագոյններից մէկն է, մանաւանդ երբ երգում է պ. Ամիրջանի նման ձայն ունեցողը, որ գիտէ իւր ժամանակին շունչ առնել և տիրապետել և կառավարել իւր ձայնը։

Երկրորդ արարողութիւնից յետոյ, անտրակտի միջոցին դահլիճներում ամենայն կողմից լսվում էին զանազան կարծիքներ, մանաւանդ խիստ էին մեր բարեկամներից նրանք, որոնք երբէք գործ չեն ունենում երաժշտութեան հետ, և ասում էին թէ պ. Ամիրջանը, թէև դևմօնի դերը լաւ կատարեց, բայց փոքր ինչ իբր թէ թոյլ էր, աշխուժութիւն չէր երևում նրա խաղում, ձևերը այնքան էլ լաւ չէին կամ, ինչպէս գրում էր մի ռուս փողոցային թերթ, «պ. Բ. Ամիրջանի ձևերը իտալական էին», կարծես, թէ իտալական ձևերը կարող են տրտաւորել դերասանին։ Զմոռանանք, որ առաջին և երկրորդ արարողութիւնների մէջ Թամարան միայն լսում է ու զգում է դևի մերձաւորութիւնը, առանց նրան տեսնելու. իսկ դևը երբեմն հեռուից, երբեմն էլ մօտից անդադար աշխատում է թովել աղջկան՝ մտքերը խռովեցնելով ու գլուխը բանալով, և այդ գործողութիւնը առանձին աշխուժութիւն չէ պահանջում, այստեղ հարկաւոր են թովիչ օձի յատկութիւններ, որ իւր ժանտ հայեացքի զօրութեամբ (հիպնոզ) հարկադրում է իւր անզօր թռչնակին

---

գանակի և կաղնի ծառերից, կտուրի վրայ քարեր են դարսում, որ քամին չքանդէ։ Տների պատուհանները շատ մանր են, շատ անգամ առանց ապակիների և գիշերն ու վատ եղանակին ծածկում են պարզապէս տախտակներով։ Տան մէջ տեղը վառվում է քարից շինուած և կաւով ծեփուած օջախը, որի ծուխը դուրս է գալիս կտուրի մէջ տեղը բացուած երդիկով։ Օջախի վրայ կախուած է կաթսան, որի մէջ եփում են կերակուրը։ Իւրաքանչիւր գիւղ ունի հասարակական թոնիրները, որտեղ հայերն եփում են իրանց հացաբլիթները, իսկ այժմ շատերն իրանց տներումն են շինում թոնիրը։ Որովհետև մեր կողմերի ծառերն այնպէս ուղիղ չեն, ինչպէս մայրիները և եղևնիները, ուստի տան պատերի մէջ լայն ճեղքեր են մնում, որ ձմեռը հայերը ծածկում են ծեփելով կաւի և աթարի խառնուրդով։ Խրճիթի տակի տարածութիւնը միշտ պատած է լինում տախտակով կամ գերաններով և ծառայում է իբրև գոմ. այդտեղ են լինում եզները, կովերը և ձիերը։ Խրճիթը միշտ բաժանվում է երկու կամ երեք մասերի։ Ինչպէս տեսնում էք բնակարանը մեծ յարմարութիւնը չունի, բայց պէտք է ի նկատի ունենալ մեր կլիմայի մեղմութիւնը։ Ամբողջ ընտանիքը տարուան մեծ մասն անց է կացնում դաշտում կամ անտառում, իսկ օրուան ընթացքում տնեցիք ժողովվում են լայն պատշգամբում և աշխատում, միայն գիշերը և պատահական վատ եղանակին ու անձրևն է նրանց փակցնում տան ներսը։

Ամեն անգամ երբ ես տեսնում եմ հայերին, թէ իրանց գիւղերում, թէ դաշտում, աշխատանքի ժամանակ, կամ մեզ մօտ, երբ նրանք ծախելու են բերում ձու, ալիւր, հաւ, միշտ ինձ զարմացնում է նրանց անսահման ուրախութիւնը և խօսասիրութիւնը։ Մի բան ծախել տալու համար նրանք միշտ ընտրում ենք անձրևոտ օրերը, երբ աշխատելն անկարելի է։ Ահա, տեսնում ես, վատ եղանակին եկան երկու երեք հայեր. ուսների վրայ բարձած բաւական ծանր բեռը, նրանք բերել են մէկըզմէկէս փութ ալիւր և անձրևից թրջուել են։ Վայր ձգելով իրանց բեռը, նրանք նստում են կրակի շուրջը տաքանալու և իսկոյն սկսվում է նրանց մէջ ուրախ և ամենակենսաթրթիռ խօսակցութիւն։ Մտածում ես որ այս մարդիկ միևնոյն գիւղացիք են, շատ անգամ միևնոյն տնից, ուրեմն կարող էին խօսակցութիւններն իրանց գիւղում վերջացրած լինել, բայց ոչ. նրանք միշտ զրոյցի, հանաքների և ծիծաղի համար անսպառ նիւթ ունին.

Դրանց մէջ ռուսերէն իմացողները մեծ ուրախութեամբ զրոյց են անում մեզ հետ ռուսերէն, հետաքրքրվում են և ամեն բանի մասին հարց ու փորձ են անում։ Վերջին ժամանակներս նրանք առանձնապէս հետաքրքրվում են Թիւրքիայում տեղի ունեցած վերջին դէպքերով, հարցնում են թէ ինչ են գրում լրագրներում, հարցնում են թէ՝ արդեօք Ռուսաստանը և օտար պետութիւնները պաշտպան կըկանգնեն հայերին և իրանք էլ պատմում են մեզ, ինչ որ կարդում են հայոց լրագրներում։ Ամեն գիւղ բերել է տալիս որևէ մի հայ լրագիր։ Ի դէպ, մեր հարևանների կրթութեան աստիճանի մասին.—հայերը չնայելով որ շատ աղքատ էին մեր երկիր եկած ժամանակ, սակայն նոյն իսկ առաջին տարիներից իրանց համար եկեղեցիներ ու դպրոցներ շինեցին։ Ճշմարիտ է՝ նրանց եկեղեցիները շատ և շատ պարզ են, ուղղակի աղքատիկ են—նոյն խրճիթը, մի քիչ մեծ և գլխին փայտեայ խաչ, բայց ներսում կան խաչելութեան պատկերներ և եկեղեցական անհրաժեշտ անօթները։ Ամեն կիւրակի և տօն օրերին եկեղեցում ժողովվում են շրջակայ բոլոր հայերը տղամարդիկ և կանայք։ Քահանան իրաւունք ունի դրամական տուրքեր ենթարկել աստուածպաշտութիւնից ծուլութեամբ յետ մնացողներին և հարևաններն էլ պարսաւանքով են վերաբերվում այդպիսի ծոյլերին։ Ժամերգութիւնից յետոյ, սովորաբար, ժողովուած հայերը հէնց այդտեղ նեթ խօսում ու դատում են իրանց հասարակական գործերի մասին։ Զատկի նաւակատիկին, պատարագից յետոյ ամենքը միասին, նոյն իսկ եկեղեցումն են թաթախվում իրանց տներից բերած հացով ու ձուով։

Եթէ գիւղերը միմեանցից մօտիկ են, այն ժամանակ նրանք ունենում են մի ընդհանուր դպրոց։ Հասակաւոր հայերից ամենքը գրագէտ չեն, բայց երիտասարդութիւնը ամենքն էլ գրում ու կարդում են հայերէն, իսկ աղայ երեխաներն ամենքն էլ սովորում են. օրիորդները դպրոց չեն գնում և անգրագէտ են, որ կարելի է վերագրել տաճկական ազդեցութեան։ Ուսուցիչը միշտ նոյնպէս հայ է, շատ անգամ նոյն գիւղացի, բայց ուսումն առած Թիֆլիզում կամ Երևանում։ Դպրոցներում սովորեցնում են գրել կարդալ հայերէն, թուաբանութիւն, մի քիչ աշխարհագրութիւնից և պատմութիւնից, մի քանի դպրոցներում սովորեցնում են նաև ռուսերէն կարդալ և գրել և հայերը շատ են ցանկանում որ իրանց որդիքն ուսանեն ռուսերէն. քահանան դպրոցում աւանդում է կրօն։

Ծնողները երեխաների հետ շատ մեղմ են վարվում, շատ քիչ են ճնշում նրանց և մեծ հոգս են տանում որ երեխայք կանոնաւորապէս այցելեն դպրոցը։ Ծնողները երբէք իրանց զաւակներին դպրոցից յետ չեն ձգում տնային աշխատանքների պատճառով։ Հայ երեխաները շատ ժիր են, ուրախ, չարաճճի և ինքնուրոյն։ Չնայելով համեմատաբար աղքատիկ սնունդին, նրանց մեծ մասը շատ առողջ են և ծաղկափթիթ տեսքով։

Հայերն իրանց տօները, մանաւանդ հարսանիքները կատարում են շատ ուրախ, թմբուկ են ածում, հրացաններ և ատրճանակներ են արձակում, երգում և շատ պարում են։ Հիւրասիրութեան նիւթերն են միսը և ցորենի հացը։ Գինի և օղի շատ քիչ են խմում. արբեցութիւն ասած բանը սովորութիւն չէ։ Ինչպէս երևում է՝ հայերի միմեանց հետ յարաբերութիւնը շատ կարգին է։ Կռիւները հազուադէպ են և սովորաբար վէճերը իրանց մէջ վերջացնում են համագիւղացիներից ընտրուած դատաւորները։ Զատ բան հայերը միասին են կատարում, համայնական ոյժերով։ Որսի գնում են 8—10 հոգի միասին և սպանուած էրէն հաւասար բաժանվում է բոլոր որսորդների մէջ, երբեմն այնպէս է պատահում որ որսն սպանողին վիճակով ընկնում է էրէի միայն կաշին կամ գլուխը։

Ամառային դժուար աշխատանքների ժամանակ մի գիւղի հայերը շատ անգամ միանում են և միասին աշխատում. այսպէս, օրինակ. եգիպտացորենը ժողովելու ժամանակ ամբողջ գիւղն աշխատում է միասին, առաջ ժողովում են մէկի բերքը, ապա երկրորդինը, երրորդինը և այդպէս մինչև վերջը, նայելով թէ որի եգիպտացորենն է աւելի շուտ հասել։

Երբ մեծ քանակութեամբ պիտի վաճառեն որևէ արտադրութիւն, օրինակ —եգիպտացորեն կամ ծխախոտ, նրանք ընդհանուր համաձայնութեամբ են սահմանում գները։ Մի կամ մի քանի գիւղեր միասին ընտրում են իրանց միջից ամենից աւելի խելօքին և փորձուածին և նա է սկսում յարաբերութիւն գնողի հետ։ Գլխաւոր աշխատութիւններն, օրինակ, հերկելը, ցանելը, հունձը սկսվում է միասին, միաժամանակ ամենքի համար. նրանք շատ անգամ ղեկավարվում են լուսնի դիրքերով, որոնց մեծ նշանակութիւն են տալիս երկրագործութեան համար։

Հայերին մօտիկ դրացի լինելով՝ մենք շատ յաճախ յարաբերութիւններ ունինք նրանց հետ և դրամական գործերում միշտ բաւականանում ենք հասարակ տոմսակներով յիշողութեան համար, որոնք ոչ մի օրինական ոյժ չունեն. հայերի մէջ չկայ այնքան չարամտութիւն և գրեթէ միշտ կարելի է նրանց խօսքին հաւատալ։

Հայերը բնաւորութեամբ, ինչպէս և երևում է, խաղաղասէր և պատերազմիկ ցեղերից են։ Այն սարսափը, որի ազդեցութեան տակ միշտ ապրել են, նրանց դարձրել է խեղճ, մինչև անգամ վախկոտ։ Անցեալ տարի մեր կողմերում աւազակութիւն էին անում իմերեցիների մի փոքր խմբակ. դրանք առանձնապէս կողոպտում էին հայերին, որոնք չնայելով իրանց բազմամարդութեան՝ ընդդիմութիւն չէին գործում։ Վերջերս այսպիսի մի դէպք եղաւ, որ բնորոշում է հայերի երկչոտութիւնը.—5 հայեր վերադառնում էին որսից և բերում էին իրանց սպանած մի վարազը. նրանց դիմացը դուրս եկաւ հրացանաւոր մի մարդ, որ ոչ մի իրաւունք չունենալով սկսեց գոռգոռալ հայերի վրայ՝ ասելով թէ ինչ իրաւունքով նրանք «առանց թոյլտուութեան» որսորդութիւն են անում ու պահանջեց նրանց հրացանը և վարազը։ Հայերն այնպէս շփոթուեցին, որ պահանջածը տուին և դատարկաձեռն տուն վերադարձան։

ընկնել իր բերանը։ Ահա, մեր կարծիքով, դեռ կարծեցեալ դանդաղութեան պատճառը առաջին և երկրորդ արարուածների մէջ. բայց երրորդում, ուր դեր յաղթելով հրեշտակին, մտնում է վանքը և հանդիպում է Թամարային երես առ երես, պ. Ամիրջանը մառացաւ իր դանդաղութիւնը և այնպիսի կենդանութեամբ յառաջ տարաւ իր դերը, որ ինը իրան գերազանցեց։ Հիանալի էր նա, երբ երգում էր «я тотъ, которому внимала ты въ полуночной тишинѣ» և այլն։ Երրորդ, վերջին արարուածներից յետոյ բուռն ծափահարութիւնները թնդացնում էին ահագին թատրոնը, որի խիստ փարչութիւնը շատ դժուար է մնացել հայ գերասանից։ Այսպէս պ. Ամիրջանը ինքն հարթեց իր ճանապարհը, հաստատուն ոտքով հաստատուելով կայսերական մեծ թատրոնում, ուր աչնանը մենք սաիթ կտեսնենք նրան լսելու միւս օպերաներում։

Համլիսականն

26 ն ապրիլի 1897 թ.
Մոսկուա

* *
*

Ամսոյս 4-ին Նորին Բարձր Սրբազնութեան Թեմակալ Առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսին պ. Ա. Անանեանի հետ ներկայացաւ գերմանացի դոկտոր Ֆիշերը, որ իր ամուսնու և երկու որդիս կանանց հետ ուղևորվում է Ուրմիա։ Ցիշեալ գերմանացին իր ուղևորութեան նպատակն այսպէս էր բացատրում—Գերմանիայում երկու կուսակցութիւն կայ հայոց խնդրի վերաբերեալ—մինը ազգային կուսակցութիւնը, իսկ միւսը՝ քրիստոնէականը։ Առաջին կուսակցութիւնը բարեկամ չէ հայոց խնդրին՝ ի վնէժ Անգլիայի, իսկ վերջին, հեռի կուսակցական միտումներից, լոկ քրիստոնէական կարեկցութեամբ է վերաբերվում խնդրին և յօգուտ այն նպատակին Գերմանիայի նման մի աղքատ ժողովրդի մէջ հանգանակած ունի 700,000 մարկից աւելի մի պատկառելի գումար։ Քրիստոնէաբար մտածող կուսակցութիւնը երկու մասնաճիւղ ունի—մինը Բերլինում, իսկ միւսը Ֆրանկֆուրտում (Մայնի վրայ)։ Որովհետև հայոց վերաբերեալ խնդրում երկու կուսակցութիւնները տարբեր հայեացքներ ունին, ուստի Բերլինեան մասնաճիւղը իրան յատկապէս ուղարկել է Հայաստան տեղեկութիւններ ծանօթանալու խնդրի հետ և ջրելու ի վնաս հայոց տարածուած լուրերը և սրանով հաշտութիւն կայացնելու ազգային կուսակցութեան հետ, և այսպէս նուիրուելու հայոց դատին։ Դոկտոր Ֆիշերը գնում է Պարսկաստանի Ուրմիա քաղաքը, ուր նա մի տարու չափ կմնայ, որից յետոյ մտադիր է անցնել Վան, Էրզրում, Տրապիզոն, վերադառնալ Գերմանիա և նորից այցելել Ուրմիա։ Ներկայումս նա մտադիր է Ուրմիայում եղած ասորական բողոքական ընկերութեան որբանոցը այցելելու, որ եթէ նպատակայարմար գտնէ, կընդարձակէ, իսկ եթէ ոչ, նոր որբանոց կըհիմնէ Տաճկաստանից Պարսկաստան փախած անտէր հայ մանուկներին պատսպարելու։ Թէ ինչ է իր նպատակը, որին յարմար կամ անյարմար կլինի ասորական ընկերութեան որբանոցը, այդ սրաչ չյայտնեց, այսքանն յայտնեց, որ իր նպատակը մաքուր քրիստոնէական է, նա չէ եկել հոգիք որսալու։

Սրբազանը մանրամասն տեղեկանալով պարոնի ուղևորութեան նպատակներին, օրհնեց և բարեմաղթեց, որ նրա գործունէութեան պտուղները մաքուր քրիստոնէական լինին։ Այս օրերը դոկտոր Ֆիշերը ուղևորվում է դէպի Ս. Էջմիածին։ Թարգմանի պաշտօն այս անձնգրութեան միջոցին Գէորգ արքեպիսկոպոսի մօտ կատարում էր Մովսէս միաբան արժ. Սահակ քահանայ Սահակեանցը։

* *
*

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

—

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը հրատարակել է այն անձանց ցուցակը, որոնց ընտրողները առաջարկել են իբրև թեկնածու իրաւասութեան 1897—1901 չորսամեակի համար։ Սրանք, իրանց գրաւոր համաձայնութիւնը յայտնելով պէտք է բալոտիրովկաի ենթարկուեն մայիսի 18-ին ընտրողական ժողովում։

Ընդամենը առաջարկուած են 295 մարդ, որոնցից 158 հայ, 74 ռուս, 52 վրացի, 6 գերմանացի, 4 թուրք և մի ֆրանսիացի։ Ռուսների թւում հաշուած են նաև լեհացիք և հրեաները։ Այս 295 անձինքներից 93-ը ներկայումս իրաւասու են կամ առաջ եղած են իրաւասու։

Առաջ ենք բերում այն 80 թեկնածուների ցուցակը, որոնք ձայների մեծամասնութեամբ են առաջարկուած.

1) Արղութեան - Երկայնաբազուկ իշխ. Նիկողայոս, Նախկին քաղաքագլուխ . . . 587
2) Բէյտէր Կոստանդին, Երդուեալ հաւատարմատար. . 582
3) Իվանենկո Ապօլոն Ա., Քաղաքագլ. պաշտօնակատար. 579
4) Վէրմիշեան Խրիստափոր, Քաղաքային վարչ. անդամ. . 574
5) Մղէբրեան Լևոն, Հաշտարար դատաւոր . . . 570
6) Դրուցկոյի իշխ. Պետր. 569
7) Արղութեան - Երկայնաբազուկ իշխ. Ալէքսանդր, Քաղաքային վարչ. անդամ. . 568
8) Չոլօկաև իշխ. Ալէքսանդր, Հաշտարար միջնորդ. . . . 568
9) Ուտնեյով Իվան, Նահանգ. դատարանի անդամ. 568
10) Ալիխանեան Յովհաննէս, Հաշտարար դատաւոր . . . 567
11) Արղութեան - Երկայնաբազուկ իշխ. Պօղոս, Քաղաք. վարչ. նախկ. անդամ. 562
12) Թամամշեան Միքայէլ, Առևտրակ. բանկի կառավարիչ. 561
13) Ճահպարոնեան Միքայէլ, Բժշկապետ. . . . . . . 559
14) Շիրշէնկօ Ի. Ա., Զինուորական բնիչ. . . . 558
15) Թումանեան իշխ. Գէորգ, Խմբագ. «Նով. Օբոզ.» լրագրի. 557
16) Եակիմով Պ. Մ., Հաշտարար անդրկով երկաթ. 554
17) Ջամշեան Ալեքսանդր, Հարկերի վերատեսուչ . . . 552
18) Ծերեթէլի Գէորգի, Խմբագիր «Կվալի» շաբաթաթ. 550
19) Բաքրաձէ Ալէքսանդր, Անտառային վարչ. բէվիզոր. . 550
20) Ֆլօրենսկի Ա. Ա. Ինժեներ . . . . . . . 545
21) Սիմօնօվիչ Դ. Ս., Լեռնային ինժեներ . . . . 545
22) Դօլուխանեան Մակիոս, Քաղ. Վարչ. նախ. անդամ. 544
23) Ճահագիզեան Կամսարական, Կալուածատէր . . . . . 543
24) Անդրօնիկով իշխ. Նիկողայոս, Տէրութեան պաշտօնեայ. . . 542
25) Քալանթար Ալեքսանդր, «Մշակի» խմբագիր. . . . 540
26) Արղութեան - Երկայնաբազուկ իշխ. Նիկողայոս, Պրոկուրորի նախկ. քարտուղար. 531
27) Ծովիանեան Ց., Սեղանաւոր . . . . . . 402
28) Մակինին Ե. Ի., Բժշկապետ. . . . . . . 401
29) Օտտէն Ֆ., Դեղագիտութեան մագիստրոս. 395
30) Փրիդոնեան Ալէքսանդր, Սեղանաւոր . . . . . . 395
31) Ալիխանեան Կոստանդին, Կանդիտատ իրաւաբանութ. . 394
32) Բուրխարդ Էմմանուէլ, Նահ. դատ. նախագահի օգն. 393
33) Էնֆիաճեանց Տիգրան, Ինժեներ . . . . . . . 393
34) Օպոչինին Պ. Ա., Երդուեալ հաւատարմատ . . 387
35) Լոնկևիչ Միքայէլ, Բժշկապետ . . . . . . 386
36) Գեավլացկի Պ. Ա., Կովկ. բժշ. մասի կառավ. . 383
37) Տուլաև Իվան, Հաշտարար միջնորդ. . . . 383
38) Փրիդոնեան Նիկողայոս, Վաճառական . . . . . 382
39) Եանգուլեան Գէորգ, Երդուեալ հաւատարմատ . . 381
40) Սարաջեւ Դաւիթ, Գործարանատէր . . . . . 381
41) Օստրօզօրսկի Ն. Ն., Գեներալ . . . . . . . 380
42) Վէյծել Ֆ. Գործարանատէր . . . . . 379
43) Կօլուբանսկի Գէորգի . 379
44) Ղորղանեան Բարսեղ, Նախկին սպայ . . . . 379
45) Բիլֆէլդ Լէօպոլդ, Ճարտարապետ . . . . 377
46) Շեմկևիչ Ա. Պ., Ճարտարապետ . . . . 376
47) Ավալով իշխ. Դաւիթ. Դիրեկտոր կալուածակ. բանկի. 374
48) Յովհաննիսեան Արզար, «Արձագանքի» խմբագիր. . . 374
49) Բէհբութեան իշխ. Արսէն, Գեներալ . . . . . . . 373
50) Բուտկևիչ Կ. Յ. . . . . 373
51) Բագրատիօն Մուխրանսկի իշխան Ալէքսանդր, Գնդապետ. . . . . 371
52) Խոսրովեան Եվգրաֆ. Քաղաք. վարչ անդամ. . 371
53) Թայիրեան Յովհաննէս, Գործարանատէր . . . 370
54) Միքէլաձէ իշխ. Վլադիմիր Գիմնազիա վարժ. դիրեկտոր. 367
55) Կարապետեան Միհրան, Ինժեներ տեխնօլոգ . . 367
56) Պոտտօ Վ. Ա., Գեներալ . . . 367
57) Եաղալեան Գրիգոր Ինժեներ . . . . 364
58) Մելիքեան Յովհաննէս Բժշկապետ. . . . 364
59) Անանեան Ստեփաննոս Բժշկապետ. . . . 361
60) Էրիսթով իշխ. Զաքարիա, Կալուածատէր . . . 361
61) Օղնօսուճով Ա. Ե., Բժշկապետ. . . . 361
62) Մաչաբելի Միխայէլ, Տէրութեան պաշտօնեայ . 361
63) Ճավճավաձէ իշխ. Իլիա, «Իվերիայի» խմբագիր . . 361
64) Ծուրինեան Յարութիւն, Դեղավաճառ . . . 361
65) Միրզօյեան Մինաս, Նաւթի գործարանատէր. . 358
66) Բարխուդարեան Արշակ, Երդուեալ հաւատարմատ. օգն. 358
67) Ալթունիկեան Միքայէլ, Բժշկապետ. . . . 357
68) Ոլխովսկի Ս. Ա., Կապիտան . . . 356
69) Տէր-Սաստուրեան Գէորգ, Քաղաքային վարկի դիրեկտոր. 354
70) Բուդաղեան Իսահակ Վաճառական. . . 353
71) Մելիքով իշխ. Դաւիթ, Կալուածատէր . . . 351
72) Վարդանեան Յարութիւն, Բժիշկ . . . . 350
73) Ղորղանեան Դաւիթ, Որբերի դատարանի նախագահ. 350
74) Ղորղանեան Յովհաննէս, Զինարարչ երկ. արտօնատէր . 348
75 Օրբելեանի իշխ. Իվան, Գեներալ . . . . 348
76) Ցականեան Գէորգ, Վաճառական . . . . 346
77) Ճարիեան Յովհաննէս Վաճառական . . . . 344
78) Էրիսթով իշխ. Նիկողայոս, Կալուածատէր . . . 341
79) Թամթոսեան Դասպար, Իրաւաբանութեան կանդիդատ. 340
80) Քէթխուդեան Դաւիթ, Կանդիդատ իրաւաբանութեան. 331

Այսպիսով ուրեմն բազմութեամբ ձայների իրաւասու են առաջարկուած այն անձինքը, որոնց ցուցակը հրատարակուած էր «Արձագանքի» ապրիլի 27 ի համարում։

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * * Ֆրանսիական և մայրաքաղաքի ռուս թերթերը դեռ շարունակում են հաղորդել Փարիզում տեղի ունեցած սոսկալի հրդեհի մանրամասնութիւնները։ Մեծ ազդեցիկ է, բարձրացրել Փարիզում Notre dame de Paris եկեղեցում հայր Օլիվիէի խօսած քարոզը դոմինիկ հոգևորականութիւնից։ Ինչպէս հաղորդում են լրագրները, ֆրանսիական հասարակապետութեան նախագահը վիրաւորուել է այդ քարոզից, որովհետև հայր Օլիվիէն քաղաքական ակնարկութիւններ է անում իր քարոզի մէջ.

«Աստուած—ասաց հայր Օլիվիէ—դըրանով ցանկացաւ մի սոսկալի դաս տալ այժմեան դարու զառօզութեան և պատժել Ֆրանսիան։ Այո՛, մեր օրերում Ֆրանսիան արժանի է այդ պատժին, որովհետև նա փոխանակ քրիստոնէական քաղաքակրթութեան գլուխն անցած առաջ ընթանալու, համաձայնուել է իբրև սոտուկ հետևել և քարշ գալ այնպիսի վարդապետութեանց ետևից, որոնք խորթ են միանգամայն թէ նրա հանճարին, թէ նրա քրիստոնէութեանը, այո, Ֆրանսիան տազօրուել է այնպիսի բարքերով, որոնց մէջ ամենևին չէ երևում նրա հպարտ և գեղեցկական ոգին և նրա անունը դարձել է համանիշ անհաւատութեան և ազատախոհութեան դէպի Աստուած . . .

Վերջապէս իր ճառի վերջում հռետորը ասում է, թէ այդ դժբախտութիւնը մի դաս է Ֆրանսիայի համար, որ նա հասկանայ եղբայրութեան գաղափարը։

## ՋԱՆՆԱՋԱՆ

«Չերնօմոր. Վեստնիկ» մի տարօրինակ, անհաւատալի լուր է հաղորդում, իբր թէ Քութայիսում երեք կանայք են երևացել, որոնք մայրապետների զգեստ հագած խորում գըրաւում են իրանց մօտ երիտասարդներին, և իբր թէ այդ երիտասարդները այդ կանանց մօտից վերադառնալով արդէն կորցրած են լինում խօսելու ընդունակութիւնը։ Այդպիսի դէպքեր իբր թէ մինչև անգամ կրկնուել են 4 անգամ և Թղթակիցը պատմում է ապրիլի 27 ին տեղի ունեցած վերջին դէպքը։ Այդ օրը տեղական հօգևոր սեմինարիայի աշակերտ Ջօրբանիձէն երեկոյեան ժամը 10 ին գնում էր դէպի ազնուականաց դպրոցը, որպէս զի մի նամակ ձգէ փոստարկղը, տուն դառնալիս նա նկատեց մայրապետի զգեստով մի կին, որ նստած լաց էր լինում։ Երբ աշակերտը հարցրեց թէ ինչո՞ւ է նա լաց լինում, կեղծ մայրապետը պատասխանեց թէ սատիկ յոգնած է, տունը շատ հեռու է, Կարմիր կամուրջով ճանապարհը երկար է իսկ ուրիշ ճանապարհ չէ ճանաչում։ Երիտասարդը գթալով կեղծ մայրապետի վրայ՝ համաձայնուեց նրան ուղեկցել և ինքը գնում էր աջից, իսկ մայրապետը ձախից։ Երբ նրանք հասան զինուորական տաճարի առաջ ընկնող հրապարակը, քաղաքի ծայրում, Ջօրբենաձէն յետ նայեց և տեսաւ որ մայրապետն աներևոյթացել է և նրա փոխարէն իրան հետևում են երեք կանայք հերարձակ և սպիտակ զգեստներով։ Նրանք սկսեցին քարկոծել Ջօրբանիձէին, գլորեցին գետին և ծեծեցին։ Աշակերտը սարսափահար տուն փախաւ, բայց տեսնելով ոչ մի հարցումին չէր կարողանում պատասխանել, նա սոսկումից համրացել էր։ Նրա վերնազգեստը պատառոտուած էր և ներկուած սև թծերով։ Թղթակիցն աւելացնում է թէ Քութայիսի երիտասարդութեան վրայ սարսափ է տիրում։ Ի հարկէ, կասկած չկայ որ այդ վարմունքը փողոցային սրիկաների գործ է և, եթէ ոստիկանութիւնը մի քիչ աչալուրջ լինի, կարող է գտնել այդ «սուտ մայրապետներին»։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիսի) և ներքին հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներվային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱԵՎԱ - ՐՈՒԴՆԵՎԱ—11—12 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ $1\frac{1}{2}$—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և ներվային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ.—$6\frac{1}{2}$—$7\frac{1}{2}$ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խուզարկուական հետազօտութիւններ են անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. Չքաւորները ձրի։ Հաւախօսքայի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Աչքային մասնաճիւղների բաժնով
ԴՈՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ
(ՆԱԽԿԻՆ ԴՈՔՏՕՐ ԿԱՐՊՆԵՉԵՆԿՈՅԻ)
Սօլօլակ, Դանովսկայա փողոց № 3,
Հիւանդների ընդունելութիւնն ամէն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Ֆ. Վ. ԶՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը $12\frac{1}{2}$—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիրակէ օրերը)։

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը $12\frac{1}{2}$—$1\frac{1}{2}$. Ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին բժիշկ ԵԱ. Կ. ԿԱՐՊՈՎԻՉ, ժամը 10—11, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ և ուրբաթ օրերը)։

Գ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը $12\frac{1}{2}$—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԴԵՆՑ, գեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և օսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեկտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրատարակում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1897 թուի, մայիսի 13 ին, ցերեկուայ ժամը 1-ին, քաղաքային վարչութեան շէնութեան մէջ աճուրդ կլինի 1898 թուականի յունվարի 1-ից կապալով տալու Մուխրանեան փողոցից մինչև Սաղը Քաւ անցնելու պարօմի հարկը։

Կապալի պայմանների մասին կարելի է տեղեկանալ քաղաքային վարչութեան գրասենում ամէն օր, բացի տօն օրերից, ցերեկուայ ժամը 11-ից մինչև ժամը 1-ը։ (4—2)

Ճանապարհորդութեան պատճառով վաճառվում է Էդիսոնի մի ՖՕՆՕԳՐԱՖ. Թիֆլիզ, Գօլովինսկի պրօսպեկտ, Ալէլովի տան, Ց. Սէմէնչեանի մօտ։ (3—1)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՅԱԿՈՐ“
Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ՌՈՒԲԼԻ ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամէն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ծովային, գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10.000 ռ. դրամագլխի, որ պիտի ետ տրուի իր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող դրամագլուխն ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում և ամէն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկվայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիզում (Վելյամինովսկայա փ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։ (100—8)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ծանուցանում է ի գիտութիւն հասարակութեան, որ սոյն 1897 թուի մայիս ամսի 10-ին, ցերեկուայ 1 ժամին, Երևանեան հրապարակի վրայ գտնուող քաղաքային վարչութեան տան մէջ տեղի կունենայ աճուրդ, որով 1897-ի յուլիսի 4-ից սկսած երկամեայ վարձակալութեան կըտրուի քաղաքի փողոցներն ու հրապարակներն փոտօգենով լուսաւորելու գործը։

Վարձակալութեան պայմանների մասին դիմել վարչութեան գրասենը ամէնայն օր, բացի տօն և կիրակի օրերից, ցերեկուայ 11 ժամից մինչև ժամի 1-ը։ (4—3)

ԱՄԵՆԱԼԱՒ ՏԻՐ ԱՂ
ԿՈՂԲԱՑ ԱՂԱՀԱՆՔԻՑ
Ցանկալու ՍԵՂԱՆԻ և ԿԵՐԱԿՐԻ համար պատրաստած
ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ
ՑՈՒԳԵՄԱՐԺ ԱՂՕՐԻՔՈՒՄ
Վաճառվում է ԹԻՖԼԻԶԻ առաջնակարգ բօկալէյնի խանութներում։
Телефонъ № 168.

№ 1. ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| ԿԷՍ ֆունտանոց փաթեթը . . . . . . . . . . | 5 կ. |
| ՄԷԿ ֆունտանոց » . . . . . . . . . . | 8 կ. |
| ՏԱՍԸ ֆունտանոց քսակը. . . . . . . . . . | 75 կ. |

№ 2. ԿԵՐԱԿՐԻ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| ՄԷԿ ֆունտանոց փաթեթը . . . . . . . . . | 6 կ. |
| ՏԱՍԸ ֆունտանոց քսակը. . . . . . . . . . | 30 կ. |

Մեծ քանակութեամբ գնողների համար առանձին զիջումն է լինում։

Առաջնակարգ հիւրանոցները եւ ուշադիր տանտիկնայք, որոնք կամենում են պատուել իրանց հիւրերին, պէտք է անպատճառ սեղանի վրայ ունենան այս ընտիր և ճերմակ ձիւն պէս սպիտակ աղը, որ պատրաստվում է Կողբայ հանքի ամենալընտիր և «ապակեայ» կոչուած աղից։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել Թիֆլիզ այս հասցէով՝
(50—31) Ервáнду П. Манденову.

Թիֆլիզի ձիաքարշ երկաթուղու Անանուն ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի ծանուցանելու յարգելի հասարակութեան, որ ինքը փորձի համար մտցնում է աբօնեմենտի տոմսակներ հետևեալ պայմաններով.—

1) Աբօնեմենտը իրաւունք կտայ ամբողջ ժամանակ երթևեկել ձիաքարշ երկաթուղու ամբողջ ցանցի վրայ՝

Տարեկան բաժանորդագրութիւն . . . . . 50 ռ.
Վեցամսեայ. » . . . . . 30 ռ.

2) Աշակերտներին տրուած աբօնեմենտը նոյնպէս իրաւունք է տալիս երթևեկել ամբողջ ցանցի վրայ, բացի տօն և կիրակէ օրերից

9 ամսեայ բաժանորդագրութիւն. . . . . 30 ռ.
6 » » 30 ռ.

Дозволено цензурою. Тифлисъ 6-го Мая 1897 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։ Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81